ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
OFFICE OF THE PRIME-MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

19 դեկտեմբերի 2018 թ.

«Hetq.am» էլեկտրոնային թերթի լրագրող
Տիրայր Մուրադյանին

Հարգելի Տիրայր Մուրադյան,

ի պատասխան Ձեր գրության հայտնում ենք, որ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետով կատարված հղումը վերաբերում է ՀՀ վարչապետին և ՀՀ նախագահին:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ նախկին իշխանությունների օրոք ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. ապրիլի 5-ի N 367-Ն գաղտնի որոշման համաձայն՝ գնման գործընթացը կազմակերպվել է գաղտնի ընթացակարգով. կատարվել են վերանորոգման աշխատանքներ, և ձեռք է բերվել գույք այն աշխատասենյակների և հանգստի սենյակների համար, որոնք հետագայում նախատեսված էին ՀՀ վարչապետի և առաջին փոխվարչապետի կողմից օգտագործման: Ներկայում նշված սենյակներում գտնվում են առաջին փոխվարչապետի և փոխվարչապետի գրասենյակները, և գաղտնի որոշման համաձայն՝ այդ աշխատասենյակների և հանգստի սենյակների վերանորոգման և գույքի ձեռքբերման վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակման ենթակա չէ:

Ի պատասխան Ձեր դիտարկման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի մասով աշխատասենյակների և հանգստի սենյակների գույքը, ինչպես նաև աշխատասենյակների նորոգման հարցը պետական գաղտնիք չեն կարող պարունակել, ևս մեկ անգամ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. ապրիլի 5-ի N 367-Ն գաղտնի որոշման համաձայն՝ նշված աշխատասենյակների և հանգստի սենյակների վերանորոգման և գույքի ձեռքբերման վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակման ենթակա չէ:

Հեռախոս՝ (374 10) 52-87-12
Phone: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ պաշտոնատար անձանց գրասենյակների այլ աշխատասենյակներ տեղափոխվելու պահից կարող ենք տրամադրել վերջիններիս կողմից զբաղեցրած աշխատասենյակների գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:

Վարչության պետի տեղակալի պաշտոնակատար
Արմեն Խաչատրյան